# ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

## Book Review – Рецензия

**ԱՆԱՀԻՏ ԱՎԱԳՅԱՆ**

*Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան*

## ՄԻՆԱՍ ԲԺՇԿՅԱՆՑԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅԱՆ ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Der Reisebericht des Minas Bžškeanc‘ über die Armenier im östlichen Europa (1830), *übersetzt und kommentiert von Bálint Kovács und Grigor Grigoryan, hg. v. Bálint Kovácz und Grigor Grigoryan, unter Mitarbeit von Alexandr Osipian, Böhlau Verlag: Wien/Köln/Weimar, 2019, 485 Seiten, ISBN 978-3-412-50724-4.*

*Բալինտ Կովաչի և Գրիգոր Գրիգորյանի աշխատասիրությամբ ու Ալեքսանդր Օսիպյանի աշխատակցությամբ հրատարակվել է Վենետիկի Մխիթարյան հայրերից Մինաս Բժշկյանցի (1771-1851) «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի Հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին» (Վենետիկ, 1830 թ., 424 էջ) ուղեգրության գերմաներեն թարգմանությունը՝ ընդարձակ ներածությամբ և ծանոթագրություններով։ Հատորի մեջ ընդգրկված է նաև գրվածքը լուսաբանող երկու առանձին հոդված.*

*Ա. Մարկ Նշանյան, «Մինաս Բժշկեանցի ուղեգրությունները» (Die Reiseberichte von Minas Bžškeanc‘, էջ 40-71),*

*Բ. Բալինտ Կովաչ, «Հայոց մայրաքաղաք Անին և «Անիի հայերը» Տրանսիլվանիայում՝ որպես խմբի ձևավորման խորհրդանիշ (Symbol) 19-րդ դարում» (Die armenische Hauptstadt Ani und die ‚Ani-Armenier‘ in Siebenbürgen. Ein Symbol der Gruppenbildung im 19. Jahrhundert, էջ 72-83)։*

*Ներածության մեջ (էջ 13-39) նշվում է, որ Հ. Մինաս Բժշկյանցի «Ուղեգրությունը առաջին հրատարակությունն է, որում Արևելակենտրոնական և Արևելյան Եվրոպայի հայերը ներկայացվում են որպես մեկ միասնական էթնիկ խումբ՝ ընդհանուր ծագման ընկալմամբ։ XIX դարում, ազգայնական շարժումների ծավալումից քիչ առաջ, Մինաս Բժշկյանցը նախաձեռնում է մի հրապարակում, որում հիմք է դնում Արևելակենտրոնական և Արևելյան Եվրոպայի հայերի*

*համար ընդհանրության զգացումի՝ խարսխված նրանց ծագման, այն է՝ Անի քաղաքից ընդհանրական ծագման առասպելի (Herkunftsmythos) վրա» (էջ 13)։ Ապա ներկայացվում են Հ. Մինաս Բժշկյանցի կենսագրական տվյալները և մանրակրկիտ քննության է ենթարկվում «Ճանապարհորդություն դեպի Լեհաստան...» գրվածքը։*

*Ա. Մարկ Նշանյանի հոդվածը «Գեղագիտական ազգայնութիւն» (Ästhetische Nationalität) գրքում Հ. Մինաս Բժշկյանցին և հատկապես նրա «Պատմութիւն Պոնտոսի» գրվածքին վերաբերող էջերի ամփոփ վերաշարադրանքն է։*

*Բ. Բալինտ Կովաչի վերոնշյալ հոդվածը նրա՝ Պրոֆ. Շտեֆան Թրոյբսթի 60-ամյա հոբելյանին նվիրված ժողովածուում հրատարակված՝ «Անիի հայերին» (Կովկասի, Օսմանյան կայսրության և Արևելյան ու Արևելակենտրոնական Եվրոպայի հայերի մի մեծ խումբ, որն իրեն գիտակցում է որպես «Անիի հայեր», տե՛ս* Der Reisebericht des Minas Bžškeanc‘ über die Armenier im östlichen Europa *(1830), էջ 72) նվիրված ուսումնասիրության*[1] *լրամշակված տարբերակն է։*

*Հ. Մինաս Բժշկյանցի «Ճանապարհորդություն դեպի Լեհաստան ու այլ երկրներ, որ բնակեցված են հայերով, որոնց նախնիները սերում են Անի քաղաքից» գրվածքի գերմաներեն թարգմանությունը (էջ 85-462) կատարվել է բարեխղճորեն և երկար տարիների աշխատանքի արդյունք է։ Բազմաթիվ ծանոթագրությունները պարզաբանում են տեքստի բանասիրական խնդիրները, աշխարհագրական անունները և այլն։*

*Այս հրատարակությունը խիստ կարևորվում է նաև մեկ այլ առումով. Բժշկյանցի ուղեգրության վերաբերյալ ուսումնասիրություններ գրեթե չկան (գրքի հեղինակները նշում են միայն երկուսը)։ Այս համառոտ հաղորդմամբ ցանկանում ենք նեղ մասնագետների և լայն հանրության ուշադրությունը հրավիրել տվյալ հրապարակման վրա, իսկ այն հրատարակության պատրաստողները միայն ուրախությամբ կընդունեն գործընկերների արձագանքները, դիտարկումներն ու առաջարկները։*

---

[1] Հմմտ. **Bálint Kovács**, *Der imaginierte Ursprung der Armenier. Die armenische Hauptstadt Ani - als „lieu de memoire“*, Leipziger Zugänge zur rechtlichen, politischen und kulturellen Verflechtungsgeschichte Ostmitteleuropas, hg. von Dietmar Müller/Adamantios Skordos, Leipzig, 2015, 251-260.